


ՏԱՍՆ ԵՒ ԵՌԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաջօրեայ):

Թղթատարութիւն ընդունվում է ամեն լեղումով:

Թղթատարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կասպեան Սև-ծովեան նաւթանցքը.— ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շուշալիքից. Նամակ Կար-
սից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.— ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց
Հայաստանից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին
լուրեր.— ՀԵՌԱՆԻՐՆԵՐ.— ԲՈՐՈՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թաւրիզի դպրոցա-
կան կենսական մի քանի տեղեկութիւններ.

ԿԱՍՊԵԱՆ-ՍԵՒ-ԾՈՎԵԱՆ ՆԱԽԱՆՅՈՒՄ

Բազուի մէջ հրատարակող «Каспий»
լրագիրը մի շարք յօդուածներով ջանում
էր ապացուցանել Կասպից ծովից դէպի
Սև-ծովը նախագծված նաւթանցքի իրա-
զօրժան վնասակարութիւնը ամբողջ Ռու-
սաստանի համար: Իր № 55-ի մէջ լրագի-
րը, իր ասածները վերջնականապէս ապա-
ցուցանելու համար, արտաստել է «Ռու-
սաց առևտրական նաւադնացութեանը նը-
պաստող ընկերութեան» (Общество со-
дѣйствія русскому торговому мореход-
ству) մանրամասն ղեկուցումը, որը ներ-
կայցրած է եղել կառավարչական բարձր
շրջաններին՝ ապացուցանելու համար որ-
քան կորստաբեր հետեւանքներ կունենար
ռուսաց թէ նաւադնացութեան և թէ դուր-
ժարական կենսից համար, եթէ անդի-
կովկասեան հումնաւթը, փոխանակ մը-
շակվելու նոյն իսկ Ռուսաստանում ուղղա-
կի Կասպից ծովի ափերից կը հոսէր նաւ-
թանցքի խողովակների միջոցով դէպի Սև-
ծովի ափերը, այդտեղ կը բնակվէր նաւերի
վրա և կարտահանվէր օտար երկրները:

Յայտնի է որ Բազուի կողմերում (Ապ-
շերոնեան ամբողջ թերակղզում) այս րո-
պէիս ստացվում է տարեկան 150,000,000
պուլը հումնաւթ, որից տեղական դուր-
ժարաններում մշակվում է տարեկան
50,000,000 պուլը կերօսին, իսկ 84,000,000
պուլը նաւթի մնացորդ է ստացվում: Այդ
նաւթային մնացորդներից մշակվում է
12,000,000 պուլը օժանելի իւղեր, մնացած
ահագին քանակութիւնն էլ դուրժ է ած-
վում անդրկովկասեան և անդրկասպեան
երկրաւորութիւններում, որպէս վառելիք, նոյն-
պէս վառելիքի տեղ դուրժ է ածվում Կաս-
պեան և Վոլգեան նաւատորմի մէջ: Մնա-
ցորդների մեծ քանակութիւնն էլ արտա-
հանվում է յիշեալ նաւերով դէպի Մոսկ-
վայի նահանգը, որի դուրժարաններում

դուրժ է ածվում որպէս վառելիք: Այդ
թւանշաններից պարզ երևում է
որ Կասպեան ծովի և Վոլգա գետի նաւե-
րը տարեկան մօտ 80,000,000 պուլը նաւե-
թի մնացորդներ են տեղափոխում, ստանա-
լով այդ տեղափոխութեան համար 6 1/2
միլիոն ռուբլի վարձ: Պարզ է, որ երբ հում
նաւթը խողովակների միջոցով կը հոսէ
դէպի Սև-ծովը, թէ Կասպից ծովի և թէ
Վոլգայի նաւերը կը կորցնեն իրանց եկա-
մուտի զիւսւոր աղբիւրը:

Երբ Կասպեան և Վոլգեան նաւատորմի
եկամուտները կը սկսեն նուազել, այդ նա-
ւատորմն էլ անշուշտ կը սկսի կորցնել իր
նշանակութիւնը և ընկնել իսկ դրա հետ
միասին կը սկսեն կորցնել իրանց նշանա-
կութիւնը և նաւեր կառուցանող դուրժա-
րանները Ռուսաստանում, ինչպէս օրինակ
Կոլոմնայի, Պերմի, բայց մանաւանդ Նիժնի-
Նովորոզի «Սորմովեան» կոչված նաւերի
դուրժարանները:

Բացի արանից պէտք է ի նկատի ունե-
նալ և այն հանգամանքը, որ, ինչպէս ար-
դէն ապացուցված է, նաւթի մնացորդների
400 պուլը վառելայոյժը հաւասար է ան-
տառի 1 զեմետինից ստացվող փայտի
վառելայոյժին, ուրեմն դուրժածելով, որպէս
վառելայոյժ, տարեկան 56,000,000 պուլը
նաւթի մնացորդներ, մենք խնայում ենք
տարեկան 140,000 զեմետինի տարածու-
թեան անտառը:

Վերջապէս երբ հում նաւթը կը սկսի
նաւթանցքի խողովակներէ միջոցով ուղղա-
կի Բազուից հոսել դէպի Սև-ծովը, և այդ
տեղից օտար երկրները կարտահանվի-
նաւթը դուրժարանները իսպառ կը կորց-
նեն իրանց նշանակութիւնը: Նախ կը կորց-
նեն, ի հարկէ, իրանց նշանակութիւնը
Բազուի այն դուրժարանները, որոնք հում
նաւթից տարեկան 50 միլիոն պուլը կե-
րօսին և 12 միլիոն օժանելի իւղեր էին
ստանալու, ապա կը կորցնեն իրանց
նշանակութիւնը՝ իսպառ կը խափանվին,
ի հարկէ, Բազուի և Ռուսաստանի այն օ-
ժանդակից դուրժարանները, ինչպէս մեքենա-
դուրժական, տակաւադուրժական, թիթեղա-
դուրժական և այլ դուրժարաններ, որոնք
կարող էին ղեղովութիւն ունենալ միմիայն
այն ժամանակ, երբ ղեղովութիւն ունէին
հում նաւթից կերօսին և նաւթի մնա-
ցորդներից նաւթային ուրիշ արդիւնքներ
պատրաստող դուրժարանները:

Առաջարկելով մեր ընթերցողներին «Ռու-
սաց առևտրական նաւադնացութեանը նը-

պաստող ընկերութեան» ղեկուցման այդ
զիւսւոր կէտերը և ծանօթացնելով հասա-
րակութիւնը ղեկուցման առաջ բերած
վնասների, թւանշանների և դատողութիւն-
ների հետ, մենք մեր կողմից չենք կա-
մենում նաւթանցքի օգտակարութեան կամ
վնասակարութեան մասին որ և է վճռո-
ղական միայն յայտնել, թողնելով մասնա-
գէտներին ազատ ասպարէզ վիճաբանելու
այդ նշանաւոր հարցի վերաբերմամբ և
պարզելու նախադժված ձեռնարկութեան
երկրի և պետութեան համար օգտակար
կամ վնասակար լինելը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՆԱՎԵՐՑ

Մարտի 4-ին

Նշանակը դարձանային է, փողոցներում էլ
պարզապէս մարդիկ չեն թափառում. իւրաքանչիւրը
գործում է իր այգիում: Գիւղացիներից շատերը
համոզված են որ այս տարի այգիները թող
կօշված հիւանդութիւնից ազատ կը լինեն, որով-
հետեւ ձկնուր ստատիկ էր և ցրտից ոչնչացած կը
լինեն թող: Գիւղացիները գոյացնող որդիները
Գիւղացիների մասին խօսելով, պէտք է ասել
որ մեր գիւղացիք օրից օր աղքատանում են,
բայց ոչ ոք չը գիտէ թէ ինչ է նրանց այդ ան-
մխիթար վիճակի պատճառը: Եթէ չը հաշուեք
վնասակարութեամբ պարագայ փոքրթիւ գիւ-
ղացիներին, կը յայտնվի որ գիւղացիների մեծ
մասը ննջւոյն ու ապաւնչը կաղմում է երկրա-
դուրժութիւնը: Բայց նրանք գրեթէ ամենին հող
չունեն, և նրանցից ոչ ոք (ոչ առանձին, ոչ էլ
համայնքով) չէ աշխատում հողեր գնելու:

Գիւղացիների հետգնեմ աղքատանալու երկ-
րորդ պատճառը՝ կուսակցութիւնների բաժանվե-
լը և փոխադրած անընդհատ երկպառակութիւն-
ներն են: Նրանք միմեանց մէջ անդադար թշնա-
մութիւններ ունեն և միշտ միմեանի դէմ դա-
րժանք են անում դատարաններում, այնպէս որ
չեն հեռանում դատարանի շէմքից: Ի հարկէ այդ
տեսակ անկողնային պրօցեսները մեծ փող են
նստում գիւղացիներին, մանաւանդ երբ խեղճերը
վարձում են ինքնակուլ այլ և այլ փաստաբան-
ներին, որոնք և հարստահարում են իրանց գիւ-
ղացի միւսմիտ կլինտներին: Խորհուրդ ենք տա-
լիս մեր գիւղացիներին՝ ձեռք վերցնել դատա-

տանական անկողնային պրօցեսներից, քանի որ
զբաղւած քանդում են թէ ուրիշների տունը և թէ
վերջ ի վերջոյ իրանց տունն էլ են քանդում:

Փետրվար ամսին ժողովուրդը, գաւառապետի
ներկայութեամբ, ընտրեց մի նոր տանուտէր:
Ցանկալի կը լինէր որ նորընտիր տանուտէրը
նախկին տանուտէրերի կիսատ թողած դուրժերը
աշխատէր, որքան հնար է, շուտով վերջացնէր:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մարտի 4-ին

«Մշակի» № 22-ի մէջ տպված նամակում ես
խօսեցի այն ապօրինի յարձակումների դէմ, որ
«Մշակ» դէմ—«Անպատակ ուսում» վերնագրով
առաջնորդող պատճառով: Գրելով յիշեալ յօդ-
ուածը ես, ի հարկէ, բոլորովին նպատակ չունէի
բանակալի սկսել «Մշակ»-ին այս կամ այն
գրական ըմբիշի դէմ, նախապէս համոզված լինե-
լով այդպիսիների անազնութեանը գրականա-
կան ապարիդում: Այդ պատճառով էլ ես աւե-
լորդ եմ համարում պատասխանել «Մշակ»-ին:
№ 7-ում տպված N. N-ի անփաստ յօդուածին, ո-
րը մի անգամ էլ ապացուցանում է այն մարդ-
կանց բարեխղճութիւնը որոնք ամբողջ յօդուա-
ծից միմիայն բառեր են վերցնում և ձգձգելով
կարծում են թէ մի բան ասած են: Եթէ պ. N.
N. թէ այդ և թէ նախընթաց յօդուածներում իր
գրութեան ձևով արժանի կացուցանէր իրան օ-
րինաւոր և լուրջ պատասխանի, այն ժամանակ
գուցէ պարոնին հասկանցինէր որ, արդարեւ, ձեռա-
դրծի վրա հակողութիւն չը կայ, ինչպէս պէտք
է, որ այդ առարկայի մասին ծրագիր գոյութիւն
չունի, և որ հետեւապէս, այն առարկայ չէ կարող
առաջադիմել՝ քանի որ այդպէս անուշադիր է
թողնված: Կայ արդեօք մեր ծխական ուսումնա-
րաններում միօրինակութիւն այդ առարկայի
դասաւանդման վերաբերութեամբ—ոչ. կայ որ և
է ձեռնարկ հայոց լեզուով այդ առարկային վե-
րաբերեալ—ոչ: Ախպիսայի օրիորդաց ուսում-
նարանի դասաւանդ հանգուցեալ Գ. Անեանցի
1882 թվին «Մշակի» մէջ հրատարակած՝ ձեռա-
գործի դասաւանդման վերաբերեալ մասնագի-
տական յօդուածներից ի դատ՝ մինչև այսօր, որ-
քան մեզ յայտնի է, ոչինչ չը գրվեց մեր մասնա-
լի մէջ: Եթէ պ. N. N-ի կարծիքով կան այնպի-
սի վարժուհիներ, որոնք ամբողջ մի քաղաքի հա-
մար հեղինակութիւն են կազմում կար ու ձևի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱԽԻԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԻ ԲԱՆԻ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայումս պարսկահայերի դպրոցական դուր-
ժը կրկին առանձին ուշադրութեան նիւթ է դառ-
նել այն աղմուկների և խառնակութիւնների
չնորձով, որոնք հէնց այժմ տեղի են ունենում
Թաւրիզում: Այդ առիթով մի կողմից, իսկ միւս
կողմից հասարակութեան հաշիւ տալու պարտա-
ւորութիւնը, այն հասարակութեանը, որը մաս-
նակցել է Լիւալայի թաղի դպրոցի հանգանա-
կութեան գործում, ստիպում է մեզ մի քանի
տեղեկութիւններ հաղորդել Թաւրիզի հայոց դպ-
րոցական կենսի վերաբերմամբ:

Կարելի է շատերը գիտեն, որ Թաւրիզի երկու
հայաբնակ թաղերի մէջ գոյութիւն ունեն երկու

երկսեռ հայոց դպրոցներ: Գուցէ այդ շատերից
շատերն էլ «Հայրենագիտութեան» մի դասադրի
հետ դեռ ես այն համոզման եմ, որ «Թաւրիզի
ունի 2500 տուն (?) հայ» բնակիչ և բարեկարգ
(?) դպրոցներ, որ այլ ես նրան ոչինչ չէ պա-
կասում և որ մենք կարող ենք ձեռքբերել ծալած
նստել: Սակայն իրականութիւնը ասում է, որ
Թաւրիզի 2500 տուն հայ բնակիչ երկու դպրոց-
ները, որ ամբողջ ընդարձակ Արդադատականի
լուսատու փարոսները պիտի լինէին, դեռ չառ
աննախաձեռնելի, դեռ չառ հեռու են «բարեկարգ»
վիճակ ունենալուց:

Ծանօթանալու նախ Լիւալայի դպրոցի ցաւե-
րին:

Մօտ 300 տուն ունեցող Լիւալայի կամ «Գրա-
թաղը» քտան տարուց ի վեր իր Ս. Սարգիս ե-
կեղեցու բակում մի-երկու դասարանից բաղկա-
ցած դպրոց է ունեցել հին դպրոցներին յատուկ
6, 7, 8 բաժանմունքներով, եթէ միայն կարելի
է այդպէս անուանել: Սրան կից մի առանձին
չինութեան մէջ երեքմէն բացվել, երբեմն փակ-
վել է օրիորդների ուսման յատկապէս բաժնի:
Հինգ տարի առաջ դպրոցը կուսակցութիւնների
չնորձով երկու մասի է բաժանվում: և երեք տա-
րու չափ մի մասը եկեղեցու բակից դուրս ա-
ռանձին շինութեան մէջ առանձնակի եկամուտնե-

րով է պահպանվում: Վերջապէս առաջնորդ հ.
ձերմակեանի ժամանակով դպրոցի բաժանված
մասերը կրկին միանում են. իսկ օրիորդաց նա-
խակրթարանը անհամաձայնութիւնների պատճա-
ռով մնում է փակված: Երեք տարի առաջ եթէ
բացվում է էլ՝ կենսքը շատ կարճատե է լինում.
որովհետեւ սրտամաշ ձկնով ամիսը 5—6 ռուբլի
ստացող անբաղդացած վարժուհի, ամուսնանա-
լով՝ բաղդաւոր տիկին է դառնում, և դպրոցի
առանց վարժուհու մնալով՝ փակվում է: Նոյնը
րից ունենք թէ մինչև այդ և թէ դրանից յետոյ,
գիտութեամբ թէ անգիտութեամբ, իրանց աղջիկ-
ներին յանձնում են նոյն թաղի միսիօնարների
դպրոցը: Իսկ Լիւալայի դպրոցը մնում է երեսի
վրա: Տղայոց դպրոց իսկապէս կազմում էին եր-
կու իրար կից ցած ու նեղ սենեակներ՝ հնուց
աղիւսածածկ, շատ տեղ դուրս թուած, անհարթ
յատակներով, փոքրիկ ու լաւաւոր մի կողմի
լուսամուտներով, խորխոր դռներով՝ առանց ու-
սուցչական սենեակի: Գալոցը, իր ձեւից թափ-
ված ցածր պատերով, իրան չըջապատող մասնա-
ւոր տների առաջ, ներկայացնում էր մի թմբա-
տուն:

Գրասեղանները և նստարանները նախաջը-
հեղեղեան, և միանգամայն քաղաքական: Գալոցի
ընդարձակ բակի մեծ մասը գերեզմանատան փո-

խորկված, քանի որ իւրաքանչիւր ննջեցեալից
ստացվող 10—15 ռուբլին դպրոցի եկամտի մի
նշանաւոր մասն է կազմում: Ըստ աւանդական,
հակաառողջապահական տեղի սովորութեան:
Իսկ այս հասարակական հիմնարկութեան՝ դպրոցի
գեղեցկութեան քիչ չէր նպաստում մի հինգ տա-
րի առաջ հաղար ու մի խողովակներով, յի-
շուցներով շինած, և լիւալայիցների կողմ բաղդից
կործանված դահլիճի աւերակներ: Որպէս զի պատ-
կերը կատարեալ լինի և ճիշդ՝ յիշենք բակի կեն-
տրոնում գեղեցկութիւնից մեկ եկեղեցին, իր
հողածածկ գմբեթով, որ բաղդիների գմբեթնե-
րից, ներքին ասել, ոչնչով չէ գանաղանվում: Ահա
րիկի մի բաղմամբար թաղի «բարեկարգ» հայոց
դպրոցը մինչև 1886—87 ուսման տարեկա սկիզ-
բը:

1886—87 ուսումն. տարեկա սկզբից սկսում են
փոխվել նրա ներքին հանգամանքները: Ներսի
հարուստ թաղի Արամեան դպրոցի հաւածաւոր ա-
ղա-հողաբարձուների բռնութիւնների, կամայա-
կանութիւնների շնորհիւ, հրաժարվում և արձակ-
վում են երեք ուսուցիչներ: Հրաժարվածը, կովկա-
սից Թաւրիզ դալու օրից՝ երկու տարի շարունակ
որ ականատես էր եղել Լիւալայի աղքատ դպրոց:

մէջ, այնու ամենայնիւ, դրանք անհշտ քաջա-
ռութիւններ են: Այսպիսով Անկան ամուսին-
ները հարկաւոր են համարուած մտքնեւ ձեռագոր-
ծի դասաւանդման մէջ տեղական կանցքի և ա-
րական շրջանակներէ ձեռն ու կարք: Նրանց գոր-
ծը շարունակող չէ ունենում: Արեւմտեան ժամանակ
ձեռագործի դասաւանդման այս կամ այն ուղ-
ղութիւն տալը կախոված է վարժարանի իրան
կամեցողութիւնից կամ հայեցողից և կամ թէ
ուսումնարանական ղեկավարներէ հայեցողութիւ-
նից՝ առանց ծրագրի, առանց ձեռնարկի, ան-
յայտութեան մէջ խորհրդակցելով կարծել որ ձե-
ռագործը «պէտք է առաջադիմէ օրըստօրէ», ու-
րիշ բան չէ եթէ ոչ ցնորք: Կրկնում եւմ եթէ պ.
N. N իր անխղճութեամբ չը կորցնէր զէպի ինքն
աւելի լաւ վերաբերելու իրաւունքը՝ այն ժամա-
նակ կը պատմէր պարոնի թէ ինչպէս եղել են
ուսումնարանները, և այն ևս թիֆլիսից յետոյ ա-
ռաջին տեղը ընտել քաղաքներում, որտեղի ու-
սուցչական խումբը երկար խորհրդածելուց յետոյ
արձանագրել է, որ ներկայ դրութեամբ ձեռա-
գործը չէ հասնում սպասած նպատակին, բայց
այժմ պարոնի հետ խօսելը ժամկէտաւորութիւն
են համարում: Միայն կը խնդրէր ընթերցողնե-
րին նորից կարդալ իմ յօդուածը «Մշակի» 22
համարի մէջ և համեմատել «Արձագանքի»: N.
N-ի գործի հետ: Մնացածը բանիմաց ընթերցողի
գործն է:

Այստեղ սկսում է անձրև գալ. Կարս-չայ կա-
տաղի յորձանքներով գնում է, լայնացնելով ա-
փերը: Թողութիւն սարսափը հասնում է իր գա-
ղաթնակէտին. նա դարձեալ երկնում է հեղե-
ղից: Ջրանցքը՝ (ЖАБАБА) որ ոտարկանութիւն ու-
ղում էր լայնացնել, դեռ անպատրաստ է. ընդ-
հակառակն, շատ տեղերում նոյն իսկ փլատակ-
ները արգելք են դառնալու ջրի ընթացքին: Ընդ-
հանուր վրայից սպասելով իր տակ՝ ձեռքերը
ծայած նստած ենք և ուսով ասածի պէս՝ «Յ-
ВООС»-ներով ենք միմիջարկում:

Հին կրպակների քանդելը ձեռնուռ եղաւ գո-
ղերին: Անցեալ դիշեր մտնելով մի կրպակաւոր-
ւոր լանտիթը գողացել էին 4—500 ռուբլու ի-
րեղեններ: Չը նայելով դրան՝ լանտիթաւորները
չեն կամենում կանոնաւոր պահպան վարձել:
Մէկը ասում է որ ինքը դերձակ է՝ եթէ զոյ
գալ՝ ուրիշ իրեղենները պէտք է տանի (!), միւ-
սը առաջ է բերում այն ապահովութիւնը՝ թէ
մինչև այժմ նրա կրպակը գող չէ մտած եղել:

Օրվայ խնդիրն է այստեղ հեղեղից ստեղծու-
ցող վտանգը և հացի թանկութիւնը: Հացի ֆուն-
տը ներկայ ամսից սկսած՝ ծախվում է 4 կոպէ-
կով: Այդ գինը շատերի համար սովի նշանակու-
թիւն ունի, քանի որ այժմս բաղմամբ ընտանի-
քի տէր չըլաւոր հայրեր ստիպված են իրանց ամ-
բողջ աշխատանքը՝ որ օրական 40—50 կոպէկի
է հասնում—սակողական գործադրել սոսկ չոր
հայի վրա: Իսկ բաղմամբ ընտանիքներ՝ այդ
ծախսն էլ չը կարողանալով անել՝ գտնվում են
աննախանձելի վիճակի մէջ: Մուրացկանները
դարձեալ մի կերպ ապրում են, մի տեսակ ձեռ-
գործ են իրանց կեանքը, իսկ այն ոչ սակաւա-
թիւ ընտանիքները, որոնք ամառում են հայեց

մարդկանց գլխովի, որոնք դեռ չեն ընտելա-
ցած պարզել ձեռքերը աշխո՞ւհ ահա այդպիսիները
գտնվում են անտանելի վիճակի մէջ: Եթէ կա-
խարդական դրութեամբ տեղացի հայի տան ա-
ւանդապահ չորս պատերը մի քաղ թափանցիկ
դառնային և թող տային մեզ դիտելու ընտանիքի
նեւքին վիճակը, այն ժամանակ շատ և շատ
սրտաճմիկ պատկերներ պէտք է բացվէին մեր
առաջ: Այդպիսի թշուառ դրութեան դարման
տանելու համար հարկաւոր է գործել հաւաքական
ոյժերով կազմակերպված մի ընկերութեան միջո-
ցով: Հարկաւոր է հիմնել Կովկասի Հայոց Բարե-
գործական ընկ. տեղական բաժինը, որի միջոցով
կարելի լինէր բաւարարութիւն տալ տեղական
պահանջներին՝ ընկերութեան ծրագրած շրջա-
նում: Կարելի ժողովուրդը մեծ գումար է ծախ-
ում բարեգործական նպատակով, ուրեմն նրա
համար անսովոր չէ տուրքը, միայն հարկաւոր է
ինիցիատիւր և ևս կարծում եմ որ այստեղի թէ
հոգեւորական և թէ աշխարհական դասում գտնու-
ւում են անձնաւորութիւններ, որոնք ամենայն
աջողութեամբ կարող էին գլուխ բերել մեր ա-
ռաջարկութիւնը:

Այստեղ լուր է տարածված, որ նահանգիս դի-
շերի բնակիչ ուսու աղանդաւորները գողութիւն
են Անդրկասպեան երկրներ: Ոմանք ասում են թէ
կառավարութիւնն է դաղթեցնում նրանց, ուրիշ-
ները հաղորդում են՝ թէ նրանք գողութիւն են յո-
ւարակում: Թէ ո՞վ կը փոխարինէ նրանց այստեղ
—յայտնի չէ:

Ալեքսանդրապոլ գաւառի գիւղացիների վիճա-
կը շատ տխուր գոյններով են նկարագրում: Հողի
պակասութիւնը և եղած հողի էլ ուժաւորում է ի-
նքն՝ մի անտանելի դրութիւն է ստեղծել այնտե-
ղի գիւղացու համար:

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՌԻՆ

Կարս, 7 մարտի

«Մշակի» № 25-ում երեք ասող ստորագրու-
թեամբ մի նամակ տպուկաւ կարդից:

Թողնելով այդ նամակի այլ կողմերը՝ իբրեւ
բարտաւրար Կարսի հայոց ուսումնարանների հո-
ղաբարձութեան հարկ եմ համարում քաղելով հո-
ղաբարձական գործերից՝ իսկական տեղեկութիւն-
ները, պատասխանել պ. թղթակցի ննթադու-
թիւններին՝ Կովկասի հայոց Բարեգործական ըն-
կերութեան խորհրդի մօտ տեղիս հայոց ուսում-
նարանների անունով պահված դրամադիւնի մա-
սին: Եւ այս՝ ճշմարտութիւնը վերականգնելու
համար միայն յախ և առաջ՝ Բարեգործական
ընկերութեան խորհրդի մօտ Կարսի ուսումնա-
րանների անունով պահված դրամարը՝ ոչ թէ
6000 ռուբլի է, ինչպէս երկու տեղ կրկնում է
պարոն թղթակցը, այլ 5000 ռուբլի:

Այդ դրամը ուղարկվելու է հողաբարձութեանը
միայն այն ժամանակ՝ երբ ուսումնարանի անու-
նով մի շահաւոր շինութիւն կը գտնվի. իսկ մինչ
այդ ժամանակ՝ խորհուրդը իւրաքանչիւր տարի ու-
ղարկում է ուսումնարանների վարչութեանը հիմ-
նական դրամադիւնի տոկոսները: Հողաբարձութիւ-

կաղարանները:

Օգոստոսի 15-ից ուսուցչական նոր խումբը
սկսեց իր գործունէութիւնը: Տասնեակ բաժան-
մունքները երեք տարվայ վերածելով՝ խումբը
երկու հողաբարձութեանի աշակցութեամբ բացեց
և առաջին դասաւորում:

Օրիորդաց զբոսը, որ մինչև այդ ժամանակ
փակված էր, կրկին բացվեց (երկու դասարաննե-
րով) միութնարանների ձեռքից աղատած խեղճ օ-
րիորդներին ուսում և ձեռագործ ուսուցանելու
նպատակով, որի համար և հրաւիրվեց խմբի երաշ-
խարութեամբ ձեռագործի վարժարձի 25 թում.
ուճկով: Հողաբարձութիւնն էլ իր ամենատուր
միջոցներով շտապեց նոր կարկատանքներով քա-
ղաքում դարձրել և դպրոցի կահկարասիքը կար-
կատել: Մինչև տեղեկութիւն սկիզբը՝ երկու շա-
բաթվայ ընթացքում աշակերտների թիւը հասաւ
133 հոգու (108 տղայ և 25 աղջիկ), նոյնքան,
որքան Ներսի թաղի Արամեան դպրոցում: Յի-
շեալ 133 հոգուց 35-ը այդ ժամանակ բողոքա-
կան միութնարանների դպրոցից կորդաճնեցին էին:
Այդ դպրոցի աշակերտներից 35-ը դարադադրի
էին, 34-ը թաւրիղեցին, 19-ը մուսուլմանացին, ե-
րեք-երեք հոգի մարաղեցի, ալաւուլեցի և սուլ-
թուլեցի, երկու-երկու սուլահանցի, շուշեցի և սո-
րուլեցի, մէկ-մէկ հոգի արդարեւցի, սուլաւուլեցի-

նը ի նկատի ունենալով քաղաքի վերաշինութիւ-
նը՝ մինչև այժմ չը վստահացաւ որ և է շինու-
թիւն գնել, բայց մի և նոյն միջոցին զգալով ու-
սումնարանական շինութեան անյարարութիւն-
ները և այդտեղից տեղափոխվելու կարեւր, նոյն-
պէս և տեսնելով որ քաղաքի մէջ նախ չը կայ
առաջիկ 450 երկսեռ աշակերտներ ղեկեղելու
յարմար բնակարան և երկրորդ՝ եթէ գտնվէր էլ-
հաղիկ թէ 7—800 ռուբլով կարելի լինէր վար-
ձել և հաշվելով որ 5000 ռուբլով ձեռք բերված
շինութիւնը հաղիկ թէ այդքան շահ բերէր ու-
սումնարանին, —նպատակաւորաւ համարեց բա-
ցատրել յիշեալ հանդամանքը խորհրդին և խնդ-
րել, եթէ հնար է, պահված դրամը ուսումնարա-
նական նորոգ շինութեան վրա գործադրել: Բարե-
գործական ընկերութեան խորհուրդը անցեալ 1888
թվի նոյեմբեր 22-ից գրված № 63 թղթով գը-
րում էր, որ իրան հարկաւոր է որոշումն անելուց
առաջ՝ «ունենալ կառուցանելի ուսումնարանի
յատկապէս և շինութեան վրա ծախսելի դրա-
մի նախահաշիւը, ըստ պատշաճին կազմված և
վաւերացված»:

Հողաբարձութիւնը անցեալ տարվայ չդիտեմ-
բերի 6-ին իր 19-որդ ժողովի որոշման համեմատ՝
գրութեամբ ի 15-էն նոյն ամսոյ № 77, պատաս-
խանց, որ «առ այժմ հարկաւոր չէ յիշեալ դը-
րամադրութիւնը, այլ հարկաւոր էր հողաբարձու-
թեան կանխապէս զիտեալ թէ՛ եթէ սկսվի
դպրոցական շինութիւն՝ արեւօք խորհուրդը կը
բարեհաճի տալ ինչպիսի գումարը: Իսկ հողա-
բարձութիւնն ձեռք բերելով կանոնաւորապէս
վաւերացեալ յատկապէս, ուսումնարանական
նորոգ շինութիւնը սկսելիս՝ կուղարկէ խորհրդի
պահանջները»:

Ահա գործի հանգամանքը:—Եթէ պարոնը չա-
կերտներ մէջ դուրս բերած չը լինէր մի սխալ
կտոր, մենք ստիպված չէինք լինելու պատաս-
խանել և պատասխանելից որպէս զի չը կար-
ծվի թէ պարոնի յօդուածը պաշտօնական բնա-
ւորութիւն ունի:

Քարտուղար հողաբարձութեան՝ Խաչատուր
Մառանկոյեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Այս օրերս Թիֆլիս նոր եկած բժշկապետ
Վահան Արծրունի ինչպիսի մեղ յայտնել,
որ ընդունում է հիւանդներին ամեն օր, առա-
ւօտեան ժամը 10-ից մինչև 11½, իսկ երեկո-
յեան 6 ժամից մինչև 7: Բժշկապետը կենում է
Կանսովսկայա փողոցում, տուն Թամարիւնի, № 26:

Մեր գաւառական թղթակցիցնեցի մէկը գրում
է մեզ, որ Եղիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում
հրատարակվող «Նիզամ» հայերէն շաբաթաթիւ-
թը լաւ տպաւորութիւն է գործում և գաւառա-
բնակ ընթերցողների վրա, դոնէ դատելով մինչև
այժմ ստացված հինգ համարների հիման վրա:
Համակրութեամբ կարդացից № 1-ում տպված
առաջնորդը, որով խնդրվեց համեստաբար
խոստովանում է իր ստանձնած գործի ծանրու-
թիւնը, խոստովանում է, որ աւելի դիւրին է

ցի, համադրանցի, թեհրանցի և սակաստեցի: Սը-
րանց մեծ մասը իրանց ծնողների հետ մշտապէս
կամ առժամանակեայ կերպով գաղթած էին Լի-
ւալա բնակութեան համար, միւս մասը ուսում
ստանալու նպատակով եկել էին շրջակայքից և
պատասխանում էին իրանց աղքատներին և ծա-
նոթներին մօտ: Կային և այնպիսիներ, որոնք այս
և այն անձի մօտ մնալով, յաճախում էին զբո-
րոց՝ դասերից յետոյ նրանց տան ծոռայութիւնը
կատարելու պարտաւորութեամբ:

Սա արդէն բաւական փաստ է, թէ այս դպրո-
ցը որքան մեծ ծառայութիւն կարող էր անել
ամբողջ Արդարապաշտի թիւմին, եթէ կարող
լինածը և աշակցութիւն գտնել...

Տեսնելու համար թէ ինչ վիճակի և դասակար-
դի են պատկանում աղք. դպրոցի աշակերտները,
առաջ կը բերեմ թանշաններով ծնողները պա-
րագրութեւնը (որը տարվի է և այս թաղի պարագ-
մունքին ծանօթանալու) հիւնը՝ 27, գործակատար
և մանրակաւառ՝ 25, ոսկերիչ՝ 13, երկարագործ՝
12 (որանք ղեկադրանքներ են), ղինագործ՝ 10,
գինեւաճառ՝ 7, մշակ՝ 3, դերձակ, բժիշկ և փայ-
տաւաճառ՝ երկու-երկու, քահանայ, ուսուցիչ,
դարբին, ամբագործ և ձիապան մէկ-մէկ:

Այս թւերը արդէն ինքն ըստ ինքեան ասում
են, որ Լիւալայի դպրոցները ապահովութիւնը չըա-

սուրը չարժեւ, քան թէ լրագրական ասպարիդի
վրա գրիչը: Յօդուածներէրց իր վրա ուշադրու-
թիւն է դարձնում «Պայման և գիտակցութիւն»,
յօդուածը, նոյնպէս վատ չեն մի քանի բանա-
ստեղծութիւններ: «Նեղոսի» մէջ կայ և երգիծա-
բանական տեղ տեղ աշղղված բաժին, բայց
ուսանային խորթ է թվում տեսնել մի թերթ,
որը չունի յօդուածների որոշ դասաւորութիւն:
Մարդ չը գիտէ իրտեղ է վերջանում լուրջ բո-
վանդակութիւն ունեցող մասը և իրտեղ է սկըն-
վում երգիծաբանականը: Սակայն դա թերեւս
յոյց մամուլի համարեալ ընդհանուր պակասու-
թիւնն է: «Նեղոսի» մէջ գործածվող կէտադրու-
թիւնն էլ շատ անկանոն է և այդ պատճառով
թերթը դժուարութեամբ է կարդացվում: Շաբա-
թաթիւրը քաղաքական բաժին չունի:

ՍԱՐԴԱՍԻՆԻՑԻՑ մեղ գրում են. «Անցեալ 1888
թվի հոկտեմբեր ամսի 17-ից սկսած ոմանք
այստեղ հանդանակութիւն բացին հանգուցեալ
վկայասան Բաֆֆիի արձանի կառուցման համար:
Որքան իմանալ, հաւաքվեց արդէն 115 ռուբլու
չափ, բայց մինչև օրս չը լսեցինք թէ ուր ու-
ղարկվեց այդ գումարը և լրագրութեան մէջ չը
կարդացինք այդ փողի մասին որ և է հաշիւ:
Նուրբատուններին հետաքրքիր է տեղեկանալ այդ
գումարի մանրամասն հաշիւ մասին հայ պարբե-
րական թերթերից միումս:

Յիշեցնում ենք հայոց հասարակութեան, որ
վաղը, ուրբաթ օր, կայանալու է Թիֆլիսի ժողո-
վարանի դահլիճում մեր երգչի պ. Ն. Շահալա-
մէ և անցի կոնցերտը: Ահա կոնցերտի պրոգրամը:
Առաջին բաժանմունքը. 1) «Ներկայիս աստղ»,
Թանհէյէր օպերայից, Վազների, կերպ է. Շահ-
լամեան, 2) Սոլո օպերայի վրա, կաճէ պ. Կնիւս,
3) Բեկետտով և արիա Մոնիւշիօի «Галёк» օպե-
րայից, կերպ օրիորդ Ամիրեան, 4) Կոչուրէի
«Скажице ей» բաժանում, կերպ պ. Շահլամեանց,
5) Սոլո վիոլոնչելի վրա, կաճէ պ. Սարաջիւ, 6)
Թաշնեանի «Կիլիկիա» երգը, հայերէն լեզուով,
կերպ պ. Շահլամեանց: Երկրորդ բաժան-
մունքը. 1) Վերդիի «Աիդա» օպերայից արիան
կերպ պ. Շահլամեանց, 2) Բանաստեղծութիւն
կը կարդայ պ. Տէր-Ստեփանով, 3) Չուրաշեանի
«Գարուն» բաժանումը հայերէն լեզուով կերպ պ.
Շահլամեանց, 4) «Melodie» Կնիւսի, կաճէ հե-
ղինակը և «Menuet» կաճէ պ. Կնիւս և Նա-
հապետեան, 5) «He искушай» գուէտը կերպն
օրիորդ Ամիրեան և պ. Շահլամեանց, 6) Կիւրի
«Вечер» և Պաշչենկոի «Прощай ты жиизнь»
բաժանումը կերպ պ. Շահլամեանց: Կոնցերտում
կը լինի Բեկէլերի ֆարթիկայից բոյալը: Կը դաշ-
նակցի պ. Փուդինեան:

ԱՐԳԻՆՍՈՅԻՑ մեղ գրում են. «Շիրակում այժմ
կատարեալ դարուն է. մինչև մարտի 10 երկրա-
գործները ցանքս դուրս կը դնեն: Օրերը շատ
տաք են և մի քանի անգամ անձրև է եկել մե-
ղանում: Կենսական պիտոյքները շիրակում զգա-
լի կերպով թանկացան. ցորենի սօմարը արժէ

ւոր արժեւատար՝ դասի ոյժերից վեր է բաւական:
Իսկ նրա ապահովութիւնը շատ կարեւոր է, եթէ
ոչ շրջակայ հայաբնակ քաղաքների և գիւղերին
ծառայելու, գէթ նոյն թաղի հայ դաւաճակնի
համար, երբ ի նկատի առնենք, որ բողոքական
միութնարանների դպրոցը այս թաղի սրտումն է
հիմնած և շատերին զէպի ինքն գրաւելու ոչ մի
միջոցից չէ խորշում:

Չորս ուսուցիչներին և մի վարժուհու տուած
ուճիկն էր 310 թուման, որը միւս մասը ծախ-
սերի հետ հասնում էր մօտ 330 թումանի, կամ
1.000 ռուբլու:

Այդ անհրաժեշտ ծախսերի համար մօտ 400
ր. պակասորդը հողացվել է նուրբատունութիւննե-
րից, որոնց նշանաւոր մասը ստացվել է Շուշի
քաղաքում տուած ներկայացումներից, այդտեղ
կատարած հանդանակութիւնից, Թաւրիզում տը-
ւած երեք ներկայացումներից և մի քանի ուրիշ
մասնաւոր անձինքներից, թէ Ուսանալատու-
նում և թէ Թաւրիզում: Այդպիսի՝ աղբիւրներից
գոյացած գումարն էր 390 ռուբլի:

(Կը շարունակվի)

